

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին

Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, այսուհետ՝ Կողմեր, գիտակցելով Կողմերի միջև համագործակցության կարևորությունը, հիմնվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների վրա, Կողմերի պետությունների դատախազական մարմինների միջև փոխըմբռնման և բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդման նպատակով, իրենց իրավասության շրջանակում հավասարության, պայմանագրային պարտավորությունների կատարման և փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա Կողմերն իրականացնում են համագործակցություն հետևյալ հանցագործությունների նախագուշացման, կանխարգելման, հայտնաբերման, բացահայտման և քննության ուղղությամբ.

- մարդկության խաղաղության և անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ,
- ահաբեկչություն և ծայրահեղականություն,
- զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի, ատոմային և ռադիոակտիվ նյութերի, թմրամիջոցների, հոգեմեդրոնոն նյութերի ապօրինի շրջանառություն,
- սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ,
- կյանքի, առողջության, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ,
- անօրինական ներգաղթի կազմակերպում,
- մարդկանց առևտուր,
- տնտեսական գործունեության ոլորտում կատարված հանցագործություններ, այդ թվում՝ հարկերի վճարումից խուսափում, մաքսանենգություն, կեղծ փողերի և արժեթղթերի պատրաստում,
- սեփականության դեմ ուղղված հանցագործություններ, այդ թվում՝ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակություն,
- շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ,
- կոռուպցիոն բնույթի հանցագործություններ,
- այլ հանցագործություններ:

2. Կողմերը համագործակցությունն իրականացնում են՝ գործելով իրենց իրավասության շրջանակում, հետևյալ հարցերով.

- տնտեսական և արտաքին տնտեսական գործունեության ոլորտում իրավախախտումների վերաբերյալ,
- ստուգման ենթակա նյութերի փոխանցման,

- պետական գաղտնիք չհանդիսացող արխիվային նյութերի օգտագործման հնարավորության ընձեռում,
- քաղաքական հետապնդումներից տուժած անձանց խախտված իրավունքների վերականգնման,
- քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնավորվածության վերաբերյալ,
- այն հարցերով, որոնք ծագում են օրինական ուժի մեջ մտած դատավճիռների հիմնավորվածությունը պարզելու և դրանք Կողմերի պետությունների դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ կիրառելու ընթացքում, որոնք պատիժ են կրում համապատասխան պետությունների քրեակատարողական հիմնարկներում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի կիրառման նպատակով Կողմերը միմյանց ցուցաբերում են իրավական օգնություն.

- քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների կատարման մասին հանձնարարությունների (միջնորդությունների) կատարման միջոցով,
- քրեական հետապնդումից կամ պատիժ կրելուց խուսափող, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը կազմակերպելու միջոցով,
- համարներ կամ այլ անհատականության հատկանիշներ ունեցող հափշտակված առարկաների, այդ թվում՝ ավտոտրանսպորտային միջոցների և հրազենի, ինչպես նաև արժեթղթերի, անձը հաստատող փաստաթղթերի՝ սահմանված կարգով հետախուզման և վերադարձման միջոցով,
- անձանց և հանցավոր խմբերի (կազմակերպությունների) հանցավոր գործունեության կանխարգելման ուղղությամբ գործողությունների համաձայնեցման, ներառյալ նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունները, հատկապես թմրամիջոցների, հոգեմերկործուն նյութերի անօրինական շրջանառության և մարդկանց առևտրի ոլորտը, ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակից լինելու մասին տեղեկատվության փոխանակման միջոցով:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է աջակցություն ցույց տալու մասին հարցումների հիման վրա:

Աջակցության ցուցաբերումը կարող է լրիվ կամ մասնակիորեն մերժվել, եթե.

- այն հակասում է հայցվող Կողմի պետության օրենսդրությանը կամ այն միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին, որոնց մասնակից է հայցվող Կողմը,
 - հարցման կատարումը կարող է վնաս հասցնել հայցվող Կողմի պետության ազգային շահերին,
 - հարցումը վերաբերում է այնպիսի արարքի, որը հայցվող Կողմի պետության օրենսդրությամբ հանցագործություն չի համարվում,
 - իրավական օգնության մասին հարցումը ուղարկվել է այն հանցագործության վերաբերյալ, որով Կողմերից մեկի կողմից քննվում է կամ դատաքննության փուլում է գտնվում քրեական գործ, և հարցման կատարման հետաձգում հնարավոր չէ:
- Նման որոշում ընդունելու դեպքում հայցվող Կողմն անմիջապես գրավոր հայտնում է այդ մասին՝ նշելով մերժման պատճառները:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման նպատակով Կողմերը միմյանց հետ հաղորդակցվում են անմիջականորեն, եթե այլ բան նախատեսված չէ այն միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից են պետությունները:

Հոդված 5

1. Իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումը պետք է ձևակերպված լինի գրավոր, ստորագրվի և ամրագրվի հարցումը ուղարկված մարմնի զինանշանով կնիքով և պարունակի հետևյալ տվյալները.

- Կողմերի դատախազությունների անվանումները,
- հարցման կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ,
- այն անձանց անունը, ազգանունը, հայրանունը, որոնց նկատմամբ անհրաժեշտություն է առաջացել կոնկրետ գործողություններ կատարել, նրանց բնակության վայրը, գտնվելու վայրը և այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հարցման կատարման համար,
- անհրաժեշտության դեպքում՝ գաղտնիության աստիճանը, որը պահանջվում է պահպանել, և համապատասխան հիմնավորումները:

2. Հարցումը կատարվում է այն հայցվող Կողմի ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Հարցումը ժամանակին կատարելու անհնարինության դեպքում հայցվող Կողմն անմիջապես գրավոր տեղեկացվում է այդ մասին:

Հոդված 6

Հարցումը կատարելիս հայցվող դատախազությունը ղեկավարվում է իր պետության օրենսդրությամբ:

Հոդված 7

Եթե անհրաժեշտ է կատարել այնպիսի գործողություններ, որոնք պահանջում են իրավասու դատախազների հատուկ որոշումներ, ապա որոշումներն ընդունվում են հարցման նախաձեռնողի կողմից, բայց միայն նրա պետության քաղաքացիների նկատմամբ: Հայցվող Կողմը նշված որոշման հիմնավորվածությունը չի քննարկում:

Հոդված 8

Երկու Կողմերի պետությունների տարածքում կատարված հանցագործությունների քննության հարցը որոշվում է Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 9

Իրավական օգնության ցուցաբերման հարցերով փոխհարաբերություններում Կողմերն օգտագործում են իրենց պետական լեզուները՝ դրանց պարտադիր կցելով ռուսերենով թարգմանությունները:

Թարգմանությունը պարտադիր պետք է հաստատվի իրավասու անձի ստորագրությամբ և կնիքով:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված ծախսերը Կողմերը հոգում են ինքնուրույն՝ Կողմերի պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված միջոցների սահմաններում:

Հոդված 11

Կողմերը, իրենց պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան, միմյանց տրամադրում են տեղեկություններ համապատասխան Կողմի պետության քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական գործերի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռների վերաբերյալ:

Կողմերը, միմյանց խնդրանքով, տրամադրում են անձանց դատվածության մասին տեղեկություններ, եթե նրանք քրեական պատասխանատվության են ենթարկվել կամ ենթարկվում են իրենց պետությունների տարածքներում:

Հոդված 12

Կողմերը սեփական նախաձեռնությամբ փոխանակում են վիճակագրական տեղեկատվություն, մեթոդական մշակումներ, գործող օրենսդրության և նախապատրաստվող օրինագծերի վերաբերյալ տեղեկություններ, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ տեղեկություններ, միմյանց աջակցություն են ցուցաբերում նյութատեխնիկական ապահովվածության հարցեր լուծելիս:

Հոդված 13

Յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածով նախատեսված կարգով և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած տարաձայնությունները Կողմերը լուծում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին հայկական կողմի ծանուցումը ստացվելու օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է 1992թ. հոկտեմբերի 8-ի՝ Ղազախստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության դատախազության միջև իրավական օգնության և համագործակցության մասին Համաձայնագրի գործողությունը:

Կատարված է Աստանա քաղաքում 2006թ. նոյեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ դազախերեն, հայերեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ ծագելու դեպքում Կողմերը պետք է հիմնվեն ռուսերեն տեքստի վրա:

**Ղազախստանի Հանրապետության
գլխավոր դատախազության
կողմից՝**

**Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազության
կողմից՝**

գլխավոր դատախազ
Ռաշիդ Տուսուպբեկով

գլխավոր դատախազ
Աղվան Հովսեփյան